

ՄԵՍՐՈՎԲ 3. ՍԵԹԵԱՆՑԻ

ՅՈՐԲԵԼԵԱՆԸ ԿԱԼԿԱԹԱՑՈՒՄ



հանելով Սեթեանցի գործունէութիւնը:

*
**

Մի էլ Յորբելեան: Բայց այս անգամ հեռուն հայրենիքից, Հնդկաստանում Գանգիսի նւիրական ափերի մօտ:

Մերսովը Յ. Սեթեանցը բուն Պարսկա-հայ է. ծնւել է 1871 թին Նոր-Ջուղայում: Դեռ պատանի՝ անցնում է Հնդկաստան: Մտնելով Հայոց Մարդասիրական Ճեմարանը կարողանում մէ յաջող քննութիւնից յետոյ աւարտել ու մտնել կեանքի մէջ: Քառասուն երկար տարիներ նա աշխատել է գրելով յօդուածներ... հրատարակելով գըրքեր ու գրքոյկներ թէ՛ հայերէն-գրաբար եւ թէ՛ մանաւանդ անգլիերէն:

*
**

Նոյ. 4-ին փառաւոր ու մեծ շքով տօնեց այս վաստակաւոր գործչի 40ամեայ Յորբելեանը, Ազն. Պ. Յովհաննէս Գալըստանեանի տնում: Երգուելցին երգեր, որոնց մէջ առանձին ու խոր տպաւորութիւն թողեց Օր. Անուշ Բարսեղեանի երգած «Հայաստանը» իսկ Տիկ. Ֆ. Ալէքսեանը եւ Օր. Վիրջինեա Նափապետեանը յոյժ հմայիչ ու սրտազբաւ կերպով նուագեցին Բամփորոտանը (dum) դաշնակի վրայ, արժաժանանալով հոսարակութեան բուռն ճափաւորութեանը...

Խօսեցին Մեծարգոյ Պ. Յ. Գալստանեանը, Իրրեւ Նախագահ Յոր. Յաննախմբի, Արժ. Տէր Եսայի Խչկր. քհնյ. Յովհաննիսեանը, Պ. Պ. Յ. Բարութիւնեան, Զ. Հանանեան, Վ. Վարդանեան, Տօքր. Սեթ Յ. Սեթեանցը եւ Պ. Հ. Մօրիօս Ճեմարանիս երբեմնի տեսուչը, ամէնքն էլ վեր

Յորբելեանից մի քանի օր յետոյ՝ այցելումեան գնացի արժանաւոր Յորբելեանին: Նա էլի կարդում էր: Երկար խօսեցինք... Մի քանի հարցեր իմ կողմից. ու նա պատմեց ինձ հետեւեալը...

«1895-ի սկզբներին էր. Տեղիս մեծ դահլիճներից մէկում Հայ հասարական մի ընդհանուր ժողով էր գումարել խորհրդակցելու Տաճկական բռնութեանց ու գուլումի դէմ բողոքելու: Ներկայ էի եւ ես: Ժողովի ժամանակ, կարծիքների փոխանակութիւնների ընթացքում, դարձայ կողքիս նրան տամ իմ մի բարեկամին ասելով. «Եթէ Անգլիան օգնութեան ձեռք մեկնի մեր տանջւող ժողովդէին՝ լոկ կատարած կը լինի իր սրբազան ու տարրական պարտականութիւններից մէկը, փոխարինած ու միանգամայն վարձատրած կը լինի այն բազմաթիւ ծառայութիւններին, որ մեր Հնդկահայ նախնիքներն են մատուցրել Բրիտանական կառավարութեան հին-անցած գնացած օրերում...»: Բարեկամս, որն ըստ երեւութին անտեղեակ էր պատմութեան, շուարած մնաց, միայն կարողացաւ ասել. «Ինչո՞ւ գրի չես առնում այդ բողոքը»:

Ժողովը վերջացաւ եւ տուն վերադարձայ մի փոքրիկ գրքոյկ հրատարակելու հաստատ որոշմամբ: Անուհետեւ օրեր շարունակ դէսուդէն էի ընկնում սողիւրներ ձեռք բերելու: Ի դէպ է ասել-յիշել, որ միանգամ դիմեցի տեղիս հանրային գրադարանին՝ տեղեկութիւններ գտնելու յոյսով, մերժեցին ու կոպտաբար մերժեցին... Մնաց գլուխ կախ, յոյս միայն մնաց ինձ ու իմ ուժերի վրայ դնելու... Դրանից յետոյ ամեն գիշեր, մինչեւ ուշ պահ, երբեմն մինչեւ

առաւօտ աշխատում էի... Բերեկները գործում՝ գիշերները գրում:

Սկզբում կարծում էի, թէ մի փոքրիկ գրքոյկ է լինելու մի քանի էջերից բաղկացած, բայց երբ աւելի լրջօրէն լեւեցի աշխատանքի տեսայ, որ գործն աւելի է ընդարձակուում քան ինչ ես նախատեսում էի: Վերջապէս պատրաստեցի՝ մի նոյնքան էլ ներդրած ռւնեցայ տպագրելու համար... վերջապէս կարողացայ լոյս ընծայել՝ «Պատմութիւն Հնդկամայրոց» վերնագրով՝ նուիրելով այն Ժամանակայ քաղաքակրթութեւրոպայի մեծագոյն դէմքերից մէկին այն է Գլադստօնին...»:

* *

Նա խոստացաւ յարմար ու լաւ պայմաններում լրացնել իր «Պատմութիւն Հնդկամայրոց» գիրքը եւ հասցնել մինչեւ մեր օրերը... Մարտի 1928 թ. կորով մեր բազմաւատասակ գրագիրին: — Երախտագիտական զգացումներով սեղմենք Նրա վատասակաւոր ձեռքը ու մեծարանքով ասենք. «Փառք ու յարգանք Գեղ»:

Կալկաթա

Ա. Թ. ԱՆԱՎԱԿԵՐԵԱՆ

ՀԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

ԲԱՏՈՒԱՅԻ ՄԷՋ

— 350 —

Նոյեմբեր 25ին կիրակի օր, Հ. Ղեւոնդ Տաշեան բանաստեղծին մը կատարեց Բատուա Cesare Pollini երաժշտանոցի զահլիճին մէջ, ուր եկած էին ընտիր բազմութիւն մը ունկնդիրներու լսելու Միւլթարեան վարդապետին ճառը հայ սրբազան երաժշտութեան վրայ որ առան-

ձին շահեկանութիւն կը ներկայացնէր, լատին եկեղեցական երգերուն հետ ունեցած աղբրսին համար:

Յետ տեսութիւններ կատարելու հայ եկեղեցական երգերու ու թէ ձայններու նկատմամբ, ինչպէս հայ Շարափեցի կազմութեան վրայ, մասնաւորապէս շարականներու երաժշտութեան մասին: Համառօտ պատմական ըլլաւ այդ երաժշտութեան, և ապա ծանրացաւ անոր ինքնայատուկ նկարագրողին վրայ, միւլթարեան և քաղցր զգացութեանը օժտած, և կը թուի աւելի ներշնչուած ըլլալ բնութեան թրթռացումներէն, և հակամէտ պահպանելու այդ ազդեցութիւնը: Ասկից անոր զանազանութիւնը լատին գրիգորեան երգերէն, թէ և երկուքն ալ միեւնոյն սկզբնաւորութիւնն ունեցած ըլլան: Գրիգորեան երգերը առանձին, որոշ օրէնքներու և կապերու ենթարկուած են, մինչ հայ եկեղեցական երգը անհատին զգացման և ճաշակին թողուած է:

Յետոյ իր տեսութիւնները շօշափելի ընելու համար, երգերու նմոյշներ ճաշակել տուաւ ունկնդիրներու, միանգամայն ցոյց տալով գրիգորեան և հայ սրբազան երգերու զիրար գրկող և զիրար բաժնող կէտերը:

Բանաստեղծին վերջացաւ խանդավառ ծափահարութեամբ ու տեղական և վնեմտիկի թերթերը գնահատական և զովեստի տղերով յօդուածներ նուիրեցին Հ. Ղեւոնդ Տաշեանի սոյն ճառաստեղծեան:

ԽՄԻ.